արտացոլումը կը սփռեն ձորահովտիս ամեն անկիւնները և կարծեցիր թէ—ահա այս է կեանքը։

Այդպէս չէ, այլ ուշդ դարձուր մի անգամ յառաջ։

Ահա անցաւ ամառն, հասաւ աշունը, յանկարծ յաջորդեց ձմեռը, տեսարանը բոլորովին փոխուեցաւ, սաստիկ քամին կը սուլէ, սար ձոր ծածկուեց սպիտակ խաւով, արջեր և գայլեր դուրս եկան որջերից, որս կը փնտռեն, պակաս չեն նաև մարդագայլեր, որք իրենց յատուկ այրերն ունին, գուն կը գործեն բքի և գազանաց ձեռքէն հալածուած և կորզուածները խեղդելու, տես, մերձակայ այրերը և ծերպերը մարդկային արեան հոտ կը բուրեն, ահա գոռացին հրացանները, և անցորդներէն մինը թաւալգլոր ընկաւ, մինը ձիան շերտը կարմիր ներկած, միւսը բերանը բաց խուփ անելով կը դիմէ ի յաւիտենականութիւն . . ։ Հարցուր այդ ձորին, ընթերցող, և նա կը պատմէ աւելի քստմնելին, անցիր հին դարը և նա կը հաստատէ, «Կալոց գիւղ յորմէ էր Ցեառն թագ յաւուրս պատերազմաց Վահանայ Մամիկոնէի և նահատակեցան քաջութեամբ ի Զարմիհր հաղարաւոր զօրաւարէ պարսից, ուր անկան ի մարտի երկու քաջ Սեպուհքն [1]»։

ՁԱԽՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՆ [2]

Ձախոն Ամատ գիւղից «Եօթ գութանի տէր» մի մեծ տուն էր։

---

1. Հ. Ալիշանի ուշադրութիւնը կը խնդրեմ այս հատուածի վերայ։

2. Ձախոյի դէպքը պատմած է Զետկան գիւղացի Մինոն. նաև ստուգած եմ Ամատ գիւղացիներէն։